# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Դրախտիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Բաղադրյալ բառերի ուսումնասիրումը՝ որպես բառի նկատմամբ կրտսեր դպրոցականի հետաքրքրության ձև. ուղի

Վերապատրաստող, մենթոր՝ Արարատ Մովսեսյան

Ուսուցիչ՝ Ապրեսյան Աննա

Դրախտիկ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ..... 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ..... 5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ ..... 20

Բաժին առաջին

Բառակազմության ուսումնասիրման մեթոդիկան տարրական

**դպրոցում**
. . . . . 20

**Բաժին երկրորդ**

**Բաղադրյալ բառերի ուսումնասիրումը տարրական դասարաններում**———— 26

**Եզրակացություններ**
. . . . . 38

**Գրականության ցանկ**
. . . . . 40

**Հավելված**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Բառակազմությունը լեզվաբանության այն բաժինն է, որը նպաստում է ինչպես նոր բառերի կազմման գործընթացին, այնպես էլ արդեն գոյություն ունեցող բառերի իմաստի և ծագման առանձնահատկությունների բացահայտմանը: Դա կարևոր է նրանով, որ հնարավորություն է տալիս արդեն գոյություն ունեցող բառարմատների հիման վրա կազմել նոր բառեր, նաև՝ հայալեզու դարձնել այլ լեզուներից մեր իրականություն թափանցաց օտար բառեր, որը բնական գործընթաց է: Իսկ այդ գործընթացը հնարավորություն է տալիս մեր լեզուն դարձնել ավելի մաքուր և նպաստում է բառապաշարի հարստացմանը: Ճիշտ է այդպիսի բառերի կիրառությունը լեզվում սկզբնական շրջանում որոշակի խորթություն են առաջացնում, քանի որ մարդկանց համար ունենում են անսովոր հնչողություն, սակայն ժամանակի ընթացքում դրանք հղկվում և դառնում են հեշտ ընկալելի՝ լրացնելով և հարստացնելով բառապաշապաշարը: Թեման արդիական է նրանով, որ նպաստում է կրտսեր դպրոցականներին բառերի իմաստն ավելի հեշտ հասկանալ և կարողանալ կազմել նոր բառեր և կիրառել առօրյա կյանքում: Սույն աշխատանքը ոչ թե բառակազմության վերաբերյալ նոր տեսության բացահայտումն է, այլ այդ տեսության ուսումնասիրության հիման վրա կրտսեր դպրոցում բառակազմական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունների հետազոտումը և բառի նկատմամբ հետաքրքրութան ձևավորումը բաղադրյալ բառերի միջոցով:

Աշխատանքի նպատակն է՝

1. Կրտսեր դպրոցում բառակազմական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունների բացահայտում, բաղադրյալ բառերի միջոցով բառի նկատմամբ հետաքրքրության ձևավորում:

Այդ նպատակներին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝

Ուսումնասիրել բառակազմության տեսությունը ժամանակակից հայերենում և բառակազմական գիտելիքների ուսուցման մեթոդիկան տարրական դպրոցում:

Բացահայտել բառակազմական գիտելիքների ձեռքբերման առանձնահատկությունները յուրաքանչյուր դասարանում,

3. Կազմել առաջադրանքների շարք, որոնք կնպաստեն կրտսեր դպրոցում բառի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը,

4. Կազմակերպել փորձարարական դասեր, որտեղ ներառված են բառակազմությանը վերաբերող առաջադրանքներ:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածից:

Աշխատության առաջին գլխում ներկայացրել ենք բառակազմության տեսությունը, որն ուսումնասիրվել է այնպիսի հեղինակների կողմից, ինչպիսիք են Մանուկ Աբեղյանը, Գուրգեն Սևակը, Աշոտ Սուքիասյանը, Լևոն Եզեկյանը և ուրիշներ:

Երկրորդ գլուխը վերաբերում է կրտսեր դպրոցում բառակազմության ուսուցման մեթոդական առանձնահատկություններին: Այստեղ խոսել ենք նաև այն փուլերի մասին, ըստ որոնց ուսուցանվում են բառակազմական գիտելիքները կրտսեր դպրոցում: Այս գլխում խոսելու ենք նաև յուրաքանչյուր դասարանում/1-4 դասարան/ հանձնարարվող առաջադրանքների մասին, որոնք վերաբերում են բառակազմությանը, որն իրականացրել ենք 1-4 դասարանների մայրենիի դասագրքերի ուսումնասիրությունների արդյունքում:

Բացի այդ, կազմել ենք առաջադրանքների սեփական տարբերակ, որը ներկայացրել ենք «Հավելված» բաժնում:

Եզրակացություններում ներկայացրել ենք այն արդյունքները, որին հասել ենք մեր ուսումնասիրությունների արդյունքում:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բառակազմությունը նոր բառերի կազմության գործընթացն է, լեզվի բառակազմական օրենքներով նոր բառերի կազմումը /10, էջ219/: Բառակազմությունը կոչված է բացահայտելու, թե ինչ տարրերից է բաղկացած բառը, ինչ հարաբերություններ ունեն միմյանց նկատմամբ, ինչպես նաև բառի կազմությունը, կառուցվածքի եղանակները և օրինաչափությունները: Բառակազմությունը, որը համարվում է բառագիտության ենթաճյուղերից մեկը, ուսումնասիրում է բառակազմական եղանակները:

Բառակազմական համակարգի մեջ մտնում են այն տարրերը, որոնցից կազմված է բառը, նրա կառուցվածքի մեջ մտնող միավորները, բառի կառուցվածքը, նաև այն օրենքները, որոնցով բառերն ըստ բառակազմական իմաստների տեսակավորվում են /10, էջ220/:

Մարդիկ միմյանց հետ շփվում, հաղորդակցվում են տարբեր միջոցներով՝ ժեստերի, միմիկայի և այլն, սակայն մտքի փոխանակման լավագույն միջոցը լեզուն է, որի համար որպես լավագույն միջոց ծառայում են բառերը/ 1, էջ 9/:

Բառն իմաստային արժեք ունեցող մեկ կամ ավելի հնչյունների միավորում է, որոնք կոչվում են ձևույթներ/5, էջ 180/: Սակայն պետք է նշել, որ բառերն ու ձևույթները տարբերվում են միմյանցից նրանով, որ բառերն արտահայտում են կոնկրետ իմաստ, իսկ ձևույթները՝ ընդհանուր, բառերն ունեն քերականական ձևավորվածություն, իսկ ձևույթները՝ոչ, բառերն գործածության տեսանկյունից ինքնուրույն և անկախ են, իսկ ձևույթները զուրկ են այդ անկախությունից և ինքնուրույնությունից: Ձևույթներն լինում են երկու տեսակի՝ հիմնական/ անկախ/ և երկրորդական/կախյալ/: Հիմնական ձևույթները հնչյունափոխված կամ չհնչյունափոխված բառային իմաստ պարունակող արմատներն են կամ բառերը, որոնք ունեն ինքնուրույն գործածություն, իսկ երկրորդական ձևույթները բառի այն տարրերն են, որոնք զուրկ են ինքնուրույն գործածությունից. Դրանք են՝ ածանցները, վերջավորությունները և հոդակապը:

Խոսելով բառակազմության մասին՝ նշենք, որ բառերն ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ, որն իր հերթին լինում է երեք տեսակ՝ պարզ ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր:

| Բառ | | |
|---|---|---|
| ՊԱՐԶ | ԲԱՐԴ | ԱԾԱՆՑԱՎՈՐ |

Ժամանակակից հայերենում ընդունված է բառակազմության երեք տեսակ՝ ածանցում, բարդություն, հապավում:

Ածանցում:

Ածանցումը բառակազմության այն տեսակն է, երբ բառարմատին կամ հիմքին ավելանում է ածանց, և կազմվում է նոր բառ, փոխվում է բառի իմաստը:

Օրինակ՝ տն + ային= տնժային

տն+ ական=տնական

Ածանցները միանգամից չեն առաջացել: Դրանք առաջացել են ինչպես գրաբարյան, այնպես էլ ետգրաբարյան շրջանում/1, էջ 181/:

Ըստ ծագման՝ ածանցները լինում են երկու տեսակ՝ բնիկ և փոխառյալ/6, էջ 265/: Փոխառյալ ածանցներն օտար լեզուներից փոխառած ածանցներն են, որոնց թիվը սակավաթիվ է: Որպես այդպիսիք՝ նշենք պարսկերենից փոխառված -ուհի-, -դժ-, ստան- ածանցները, ռուսերենից փոխառված - իստ-, -իզմ-, -իա-, -ցիա- կամ - ացիա- ածանցները /5, էջ 185/:

Բնիկ ածանցներն այն ածանցներն են, որոնք առաջացել են հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում, տարբեր եղանակներով՝ հոլովի մթագնումից, արմատի իմաստի փոփոխությունից կամ մթագնումից, բառերի հնչյունափոխության արդյունքում, երկու ածանցների միավորումից:

Ածանցների մի շարք առաջացել է արմատի իմաստի փոփոխության կամ մթագնման արդյունքում և վերածվել ածանցների: Ածանցների այդ շարքին են պատկանում հետևյալ ածանցները՝ որդ, արդ, արար, բար, որեն, վան և այլն: Օրինակ՝ օրիորդ բառը նշանակել է իշխանի որդի, սակայն հետագայում այն կորցրել իր իմաստը և դարձրել է -որդ- ածանց/5, էջ 183/:

Ածանցների մի շարք էլ, ինչպես արդեն նշվեց, առաջացել է հոլովի իմաստի մթագնումից /ի, իվ, ուց և այլն/: Օրինակ՝ աղի հաց արտահայտության աղի բառի ի-ն հանդես է գալիս որպես ածանց, քանի որ արտահայտում է ածականի իմաստ, իսկ աղի կտոր արտահայտության մեջ աղի բառի ի-ն հանդես է գալիս որպես սեռական հոլովի վերջավորություն:

Մի շարք ածանցներ էլ առաջացել են բառերի հնչյունափոխության արդյունքում: Դրանք ստեղծվել են 5-6-րդ դարերում հունական դպրոցի ներկայացուցիչ Դավիթ Անհաղթի կողմից /1, էջ /: Որպես այդպիսի ածանց կարող ենք նշել ատ ածանցը, որն առաջացել է հատ արմատի հնչյունափոխության արդյունքում: Օրինակ՝

Պոչատ-պոչհատ-պոչը հատած, կտրած

Քնատ-քնհատ-քունը հատած, կտրած

Հունական դպրոցի երևան գալուն պես առաջացել են 23 ածանցները, իսկ մինչ այդ գոյություն են ունեցել միայն ժխտական ածանցները:

Խոսելով արմատների առաջացման մասին՝ պետք է նշել, որ որոշ ածանցներ էլ առաջացել են երկու ածանցների միավորումից.

Կոտ= ակ+ոտ/վախկոտ/

Ակի=ակ+ ի/բազմակի/

Անակ= ան+ակ/շրջանակ/

Ածանցները կարող են լինել կենսունակ և ոչ կենսունակ: Կենսունակ են այն ածանցները, որոք ավելի ակտիվ, գործուն մասնակցություն են ունենում բառակազմությանը /ան, ական, ություն, ուհի և այլն/, իսկ անկենսունակ են այն ածանցները, որոնք այդքան հաճախ չեն մասնակցում բառաստեղծմանը / ույք, դժ, ապ և այլն:

Ըստ ձևաբանական հատկանիշի՝ ածանցները լինում են գոյականակերտ, ածականակերտ, թվականակերտ, մակբայակերտ և բայակազմական:

Գոյականակերտ են կոչվում այն ածանցները, որոնք միանալով բառին կամ արմատի կազմում են գոյականներ: Օրինակ՝

տուն+ակ=տնակ

գոգ+նոց=գոգնոց

մատ+անի=մատանի

ճոճ+անակ=ճոճանակ

Ածականակերտ են կոչվում այն ածանցները, որոնք միանալով բառարմատին կազմում են ածականներ: Օրինակ՝

տ+գետ=տգետ

ան+կիրթ=անկիրթ

դժ+գոհ=դժգոհ

Թվականակերտ ածանցներ են կոչվում այն ածանցները, որոնք միանալով բառին, կազմում են թվականներ: Խոսքը վերաբերում է դասական, բաշխական, կոտորակային թվերին: Օրինակ՝ երեկ+ական =երեքական

երեք+որդ= երրորդ

Մակբայակերտ են կոչվում այն ածանցները, որոնք միանալով բառին կազմում են մակբայներ:Դրանք են բար, պես, որեն, ովին, ագին, իվ, պատիկ ածանցները:

Ժամանակակից հայերենում բայածանցները միջնածանցներն են / 5, էջ 186/:

Դրանք են՝

սոսկածանցներ- ան, են, ն, չ պատճառական ածանցներ- ացն, եցն, ցն բազմապատկական ածանցներ - ատ, ետ, կոտ, տ կրավորական ածանց -վ

Կան ածանցներ, որոնք մի քանի խոսքի մաս կազմող ածանցներ են: Նման ածանցները հիմնականորմ լինում են միաժամանակ գոյականակերտ և ածաանակերտ, ածականակերտ և մակբայակերտ, գոյականակերտ, ածականակերտ և մակբայակերտ /10, էջ 263 /:

Օրինակ՝

| ԱԿ | |
|---|---|
| ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՏ | ԱԾԱԿԱՆԱԿԵՐՏ |
| սահնակ<br>դիմակ | ձախողակ<br>միակ |

Ինչպես արդեն նշվեց, կան ածանցներ, որոնք և՛ ածականակերտ են, և՛ մակբայակերտ: Օրինակ՝ ակի ածանցը հոգնակի, որոշակի, կողմնակի բառերում հանդես է գալիս որպես ածականակերտ ածանց, իսկ թեթևակի, հանկարծակի, հաճախակի բառերում՝ որպես մակբայակերտ ածանց: Իսկ ահա երեն ածանցը և գոյականակերտ է, և ածականակերտ է, և մակբայակերտ է:

Բացի ձևաբանական հատկանիշից, ածանցները դասակարգվում են նաև ըստ դիրքի; այսինքն՝ ըստ բառահիմքին կցված դիրքի՝ ածանցները լինում են նախածանցներ, միջնածանցներ և վերջածանցներ:

Նախածանցներն այն ձևույթներն են կամ ածանցները, որոնք բառարմատին կամ հիմքին կցվում են սկզբից: Նշենք, որ նախածանցները լինում են դրական, հաստատական և ժխտական /5, էջ 187/: Ժխտական նախածանցները հինգն են՝ ան, ապ, դժ, տ, չ: Օրինակ՝ ան- անզգույշ

ապ- ապերախտ

դժ- դժկամ

տ -տգեղ

չ -չտես

Դրական և հաստատական նախածանցների թիվն ավելի շատ է /անդր, առ, արտ, բաղ, բաց, գեր, դեր, ենթ, հակ, թեր, համ, հար, մակ, նախ, ներ, շաղ, շար, պար, վերա, տար, տրամ, փոխ/ /6, էջ 264/:

Միջնածանցները բայածանցներն են՝ ան, են, ն, չ, ացն, եցն, ցն, ատ, ոտ, կոտ, տ, վ: Օրինակ՝ թռնել- թռչել, վազել-վազեցնել, ցատկել—ցատկոտել և այլն:

Վերջածանցներն այն ածանցներն են, որոնք կցվում են բառահիմքին վերջից: Ժամանակակից հայերենում մեծամասնություն են կազմում վերջածանցները:

Օրինակ՝ ուրախ<u>ություն</u>, մայր<u>աբար</u>, ցավա<u>գին</u>, գեր<u>ազույն</u>, նավ<u>ակ</u>, փոքր<u>իկ</u>, ցուց<u>անակ</u> և այլն:

Ըստ բովանդակության՝ ածանցները լինում են տեղ ցույց տվող /անոց, արան, ստան/, գործողության կատարման ձև ցույց տվող/բար, պես, որեն, ովին/, նվազական, փաղաքշականակ, իկ, ուկ/, որակական, այսինքն՝ ժամանակ, տարածք ցույց տվող ածանցներ/ե, յա, ական/ հավաքական/ անք, ենք, ունք/, իգական սեռ ցույց տվող ածանցներ/ուհի/ և այլն/5, էջ188/:

Ըստ ձևաիմաստային հատկանիշի՝ ածանցները լինում են համանուն, հոմանիշ և հականիշ: Համանուն ածանցները հնչունական կազմով նույնը, սակայն իմաստով տարբեր ածանցներն են: Օրինակ՝

-անի—մի բան ունեցողի հատկանիշ/գեղանի/

-անի-հավաքական իմաստ արտահայտող/ տեսականի/

Հոմանիշ ածանցներ են կոչվում այն ածանցները, որոնց հնչյունական կազմը տարբեր է, սակայն իմաստը նույնն է: Այդպիսի ածանցներ են՝

բար-պես- որեն ակ-իկ-ուկ արան-աստան-անոց-ոց իչ-ող-որդ-պան-արար-վոր

Հականիշ ածանցներ են կոչվում այն ածանցները, որոնք ունեն հակառակ իմաստ: Այդպիսի ածանցներ են՝ ավոր-- ան, ատ/ 5, էջ 189/: Օրինակ՝

պոչ**ավոր-ան**պոչ, պոչ**ատ** գուն**ավոր-ան**գույն, գուն**ատ**

Բարդությունն իբրև բառակազմության միջոց

Բարդությունը բառակազմության այն եղանակն է, երբ երկու և ավելի հիմնական ձևույթների կամ արմատների միացումով ստեղծվում է կամ կազմվում է նոր բառեր, որոնք ունեն մեկ ընդհանուր բառային շեշտ: Խոսելով բարդությունների մասին՝ նշենք, որ այստեղ առկա է որոշակի աստիճանավորություն /1, էջ 136 /: Սկզբում առաջացել են հարադրությունները, հետո կցական բարդությունները, նոր իսկական բարդությունները:

Բարդությունները լինում են վերլուծական և համադրական: Բարդությունները վերլուծական են կոչվում, քանի որ հանդես են գալիս վերլուծական եղանակով, ունեն բառային մեկ ընդհանուր շեշտ և ընկալվում են որպես բառային մեկ միավոր: Վերլուծական բարդությունները լինում են երեք տեսակ՝ կրկնավոր, հարադիր, բաղհյուսական:

Կրկնավոր բարդությունը բառակազմության ամենապարզ, նախնական ձևն է, երբ բառի իմաստի ուժեղացման կամ քանակի մեծացման նպատակով նույն բառը կրկնվում է/11, էջ 146/:Կրկնավոր բարդությունը վերլուծական բարդության ամենապարզ տեսակն է և առաջացել է լեզվի զարգացման վաղ փուլում: Կրկնավոր բարդությունները հիմնականում կազմվում են միավանկ և երկվանկ բառերից: Կրկնավոր բարդությունները գրվում են անջատ, գծիկով և «ու» կամ «և»շաղկապներով/1, էջ146/: Օրինակ՝ մեկ-մեկ, փաթիլ-փաթիլ և այլն: Կրկնավոր բարդությունները կարող են կազմվել տարբեր խոսքի մասերի կրկնությամբ:

-Գոյականների կրկնություններից կազմվում են ածականներ և մակբայներ /փունջ-փունջ ծաղիկներ-ածական, խումբ-խումբ խաղալ - մակբայ/:

-Ածականների և մակբայերի կրկնությամբ կազմվում են ածականներ և մակբայեր:

–Թվականների կրկնությամբ կազմվում են կրկնավորներ, որոնք ստանում են բազմակիութան, բաշխական նշանակություն /օրինակ՝մեկ-մեկ, մի-մի, վեց-վեց և այլն/:

–Դերանունների կրկնությամբ կազմված կրկնավորները երկու իմաստ են արտահայտում՝ բազմակիություն և առանձնահատկություն/ինչ-ինչ, ով-ով/:

–Ձայնարկությունների և բնաձայնականների կրկնություններից կազմվում են կրկնավոր բարդություններ, որոնք արտահայտում են սաստկական իմաստ /ո՞ւ ո՞ւ ո՞ւ, վա՞յ-վա՞յ, վա՞շ-վա՞շ և այլն/:

–Կրկնավոր բայերի մասին խոսելով՝ պետք է նշել, որ դրանք կազմվում են հարադիր բայի հարադիրի կրկնությամբ / կտոր-կտոր անել, մաս-մաս ուտել և այլն/:

Կան կրկնավորներ, որոնք կազմվում են գրաբարյան նախդիրներով, որոնք ընկնում են կրկնավոր բաղադրիչների միջև / մերթ ընդ մերթ, քայլ առ քայլ և այլն/:

Որոշ կրկնավոր բարդություններ էլ կազմվում են որևէ ձայնավորի կամ բաղաձայնի հնչյունափոխությամբ: Այս կարգի կրկնավոր հարադրական բարդություններում հնչյունափոխվում կամ հնչյունի կորուստ կրում է կրկնվող բաղադրիչներից մեկը կամ բաղադրիչների միջև առաջանում է հավելյալ հնչյուն: Բաղադրիչները գրվում են գծիկով, երբեմն էլ նրանց միջև ընկնում է «ու»շաղկապը /10, էջ 239/: Օրինակ՝առոք-փառոք, սուս ու փուս, ալան-թալան և այլն: Խոսելով հնչյունների փոփոխությունների մասին՝ նշենք, որ բաղաձայն հնչյունների հնչյունափոխությունը կարող է լինել կրկնավոր բարդության առաջին բաղադրիչի բառասկզբի բաղաձայնի կորուստը /առոք-փառոք/, երկրորդ բաղադրիչի բառասկզբի բաղաձայնի փոփոխությունը /սուտ-մուտ, կլոր-մլոր/, բացի այդ կրկնավոր բարդության երկրորդ բաղադրիչի սկզբում ավելանում է բաղաձայն հնչյուն /ոլորմոլոր, ամա-չաման ոսկոր-մոսկոր և այլն/:

Կրկնավոր բարդություններում կարող է հնչյունափոխվել նաև երկրորդ բաղադրիչի ձայնավորը / մանր-մունր, մարդ-մուրդ և այլն/: Կրկնավոր բարդություններ կազմվում են նաև առաջին բաղադրիչի առաջին վանկի փոփոխությամբ/ կաս-կարմիր, լեփ-լեցուն/, ինչպես նաև՝ կրկնավոր բարդության երկրորդ բաղադրիչի ձևափոխությամբ /տեր- տիրական, փոր-փսոր/:

Վերլուծական բարդության մյուս տեսակը հարադիր բարդությունն է: Հարադիր բարդություններն այն բարդություններն են, որոնք կազմվում են մեկից ավելի բաղադրիչներից և միասին արտահայտում են մեկ իմաստ: Օրինակ՝ ներս մտնեփլ, դուրս գալ և այլն: Հարադիր բարդությունները գիտակցվում են որպես մեկ բառ, սակայն առանձին բառերի որոշ հատկանիշներ: Հարադիր բարդությունները լինում են անվանական և բայական: Անվանական հարադրական բարդություններ են կոչվում որևէ խոսքի մասի պատկանող տարբեր բառերի համադրությամբ կազմված բարդությունները: Անվանական հարադրական բարդությունները կազմվում են գոյական, ածական, թական, մակբայ, շաղկապ, եղանակավորող բառ խոսքի մասերի բառերի համադրությամբ /10, էջ233 /: Օրինակ՝ ձյուն-ձմեռ, բարակ-մարակ, ետ ու առաջ, քանի որ և այլն:

Հարադիր բայերը կազմվում են մեկ հարադիր բառից և մեկ բայից/ 1, թջ 137 /: Օրինակ՝լաց լինել-լացել, զրույց անել-զրուցել և այլն: Պետք է նշել, որ հայոց լեզվում հարադիր բարդությունների մեծ մասը հարադիր բայեր են, այսինքն՝բայն ու նրա հարադիրը ստանում են մեկ բառի իմաստ և կարող են արտահայտվել մեկ բառով: Սակայն, պետք է նշել նաև, որ հարադիր բայերից կազմված բառերի մի խումբ էլ կարող են արտահայտել բոլորովին այլ իմաստ /1, էջ 138 և 6, էջ 233-234/: Օրինակ՝ հուպ տալ-հպել, թափ տալ-թափել:

Հարադիր բայերը կարող են կազմվել որևէ խոսքի մասի և վերացական իմաստ ստացած բայերի/ լինել, անել, դարձնել, դառնալ / կապակցությամբ, տեղ ցույց տվող բառերով և մակբայներով: Օրինակ՝ներս գալ, դուրս գնալ, առաջ ընկնել և այլն / 1, էջ

138 և 10, էջ 235/:

Խոսելով հարադիր բայերի մասին՝ նշենք, որ որպես հարադիր բայեր հանդես են գալիս այլաբանական իմաստ արտահայտող դարձվածքները և շրջասույթները, որոնք կարող են լինել և անվանական, և բայական հարադրություններ: Օրինակ՝ աչքը ծակ, ձեռքը բաց, գլխի ընկնել և այլն /6, էջ 232/:

Հարադիր բարդության մի տեսակ է բաղհյուսական բարդությունները, որոնք մյուս բաղհյուսական բարդություններից տարբերվում են նրանով, որ նրա բաղադրիչները համազոր են միմյանց նկատմամբ և միանում են «և» կամ «ու» շաղկապներով /11, էջ 156, 5, էջ 192 և 10, էջ 236/: Բաղհյուսական բարդությունները կազմում են նույնանիշ, համանիշ, իմաստով իրար մոտև հականիշ բառերի համադրություններից: Օրինակ՝ ցիր ու ցան, հագած-կապած, անց ու դարձ և այլն:

Բաղհյուսական հարադրություններ են նաև իրար հաջորդող թվականները:

Համադրական բարդություններ

Բարդությունների մյուս տեսակը համադրական բարդությունն է: Համադրական բարդությունը միասին, միաձույլ բառային միավորումներ են, որոնք ունեն բառային մեկ ընդհանուր շեշտ /5, էջ 193/:

Ըստ կցվածության աստիճանի, շարահյուսական կապի դրսևորման, իմաստային կապի անկախության՝ համադրությունները բաժանվում են երկու խմբի՝ կցական և իսկական բարդություններ / 10, էջ 241/:

**Կցական բարդություններն** այն բարդություններն են, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց իմաստային անկախությունը: Օրինակ՝ այսօր, կեսօր, ինչևէ և այլն: Կցական բարդություններ կարող են առաջանալ կրկնավոր, հարադիր և բաղհյուսական բարդություններից: Ինչպես արդեն նշեցինք, կրկնավոր բարդությունները հաճախ միանում են գծիկով, բայց կան նաև կրկնավորներ, որոնք հանդես են գալիս որպես կցական բարդություններ, որոնք կարող են կազմվել արմատի կրկնությամբ՝ հնչյունափոխված կամ չհնչյունափոխվախ, հնչյունների հավելումով կամ կորուստով/11, էջ 158/: Օրինակ՝ թրթիռ, կսկիծ, խլխլուկ և այլն:

Կցական բարդությունների մի շարք էլ կազմվում են գրաբարյան առ, ընդ, ըստ, գ, ի, ց նախդիրներով /1, էջ 148 և 6, էջ 242/: Օրինակ՝ իսպառ, մերթընդմերթ, օրստօրե, իզուր առայժմ և այլն:

Կցական բարդություններ կարող են կազմվել նաև հարադիր բարդություններից: Օրինակ՝ ակնածել–ակն ածել, գործածել– գործ ածել, հորեղբայր–հոր եղբայր և այլն:

Կցական բարդություններ կարող են կազմվել բաղհյուսական բարդություններից: Օրինակ՝ առևտուր, այրուձի, ելևէջ, ելումուտ և այլն: Նշենք, որ այդպիսի կցական բարդությունները հաճախ կորցնում են իրենց իմաստային ինքնուրույնությունը և ստանում են փոխաբերական իմաստ/10, էջ 244/: Օրինակ՝ նիստուկաց–բարք, աղուհաց– բարեկամություն և այլն:

**Իսկական** են կոչվում այնպիսի բարդությունները, որոնք կազմվում են երկու և ավելի հիմնական ձևույթներից կամ արմատներից, որոնց միջև շարահյուսական կապը մթագնած է կամ ձևաբանորեն դրսևորված չեն համապատասխան վերջավորությամբ /5, էջ 195 և 10, էջ 246/: Իսկական բարդությունների համար առանձնացվում են մի շարք առանձնահատկություններ.

–ունեն բառային մեկ ընդհանուր շեշտ, որն ընկնում է բառի վերջին բաղադրիչի վրա /արևածաղիկ, աստղազարդ /,

-բարդության բաղադրիչները կորցնում են իրենց իմաստային անկախությունը / գրասեղան-սեղան, որի վրա գրում են, փայտփոր-թռչուն, այլ ոչ թե փայտ փորող/: Այսինքն՝ բարդության իմաստն առանձին-առանձին վերցրած ավելի նեղ է, իսկ բարդության իմաստն ամբողջությամբ վերցրած ավելի լայն է: Սակայն կան բարդություններ, որոնց իմաստն առանձին-առանձին վերցրած ավելի լայն է/10, էջ

246-247 /:

-իսկական բարդությունները միաձույլ են, և եթե անգամ անջատենք, ապա դա կհանգեցնի բաղադրության իմաստային խախտման / մեծատուն-մեծ տուն /,

-իսկական բարդությունների առանձնահատկություն է բաղադրիչների հնչյունափոխությունը, որը կապված է բառային շեշտի հետ,

-իսկական բարդությունների բաղադրիչները միանում են <<ա>> հոդակապով / վարդ+ա+կակաչ=վարդակակաչ, հյուր+ա+սենյակ=հյուրասենյակ /:

Խոսելով հոդակապի մասին՝ նշենք, որ «ա» հոդակապը բարդության առաջին բաղադրիչի վերջին իտառի հետ հնչյունափոխվելով դառնում է «ե»: Օրինակ՝ այգի+ա+պան=այգեպան, գինի+ա+տուն=գինետուն և այլն/: Ինչպես Գ. Սևակն է նշում, ե-ն հանդես է գալիս «ա» հոդակապի և «ի» վերջավորության միավորման արդյունք /11, էջ 147 /:

Իսկական բարդությունները կարող են լինել նաև անհոդակապ: Օրինակ՝ ջրկիր, հացթուխ և այլն:

Կապված հոդակապի հետ՝ նշենք նաև, որ եթե բարդության առաջին բաղադրիչը վերջանում է -ա- հնչյունով, ապա այս դեպքում «ա» հոդակապը չի գրվում/ օրինակ՝ երեխամայր /: «Ա» հոդակապը չի գրվում նաև այն ժամանակ, երբ բարդության երկրորդ բաղադրիչը սկսվում է ձայնավոր հնչյունով: Օրինակ՝ գաղթօջախ, բազմերանգ և այլն: Կան բառեր, երբ երկրորդ բաղադրիչը սկսվում է ձայնավոր հնչյունով, սակայն «ա»հոդակապը գրվում է: Խոսքն այստեղ վերաբերում է ածականի գերադրական աստիճանը կազմող **ամենա**ձևույթին /1, էջ 155/: Օրինակ՝ ամենաարագ, ամենաուժեղ և այլն: Կան հնուց եկած բառեր, որոնք գրվում են հոդակապով, բայց երբ բառին ածանց է ավելանում կամ ինչպես նշվում է Մ. Աբեղյանի մոտ, մեծանում է ածանցով, հոդակապը դուրս է ընկնում /1, էջ 157/: Օրինակ՝լրջամիտ-լրջմտություն, արծաթասեր- արծաթասիրություն և այլն:

Կան բարդություններ, որոնք հոդակապով գրելու դեպքում ուրիշ իմաստ են ստանում, իսկ հոդակապով չգրելու դեպքում՝այլ իմաստ: Օրինակ՝ քարտաշ-քար տաշող, իսկ քարատաշ-քարից տաշված:

Անդրադառնալով իսկական բարդությունների բազմիմաստությանը՝ նշենք, որ դրանց բազմիմաստության պատճառ է դառնում բարդությունների բաղադրիչների ոչ հստակ ձևավորումը:

Օրինակ՝ լավատես - 1. լավը տեսնող

2. լավ տեսնող

Կարևոր է նշել այն հանգամանքը որ բարդության բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են որոշակի հարաբերակցության մեջ. դրանք հիմնականում ստորադաս են, սակայն կան նաև համադաս: Օրինակ՝ ընձառյուծ, վայելչագեղ և այլն: Իսկ բաղադրիչների ստորադասական հարաբերակցություն ասելով՝ նկատի ունենք այն, որ ըստ իմաստի բաղադրիչներից առաջինը երկրորդի լրացումն է, այսինքն՝ բարդ բառի հիմնական իմաստը երկրորդ բաղադրիչի մեջ է, առաջինը որևէ կողմից որոշում կամ լրացնում է երկրորդի իմաստը /1, էջ164/: Օրինակ՝հացատուն-հացի տուն, գլխաբաց-գլուխը բաց և այլն: Պետք է նշել, որ հայկական բարդությունները հենց այս սկզբունքով են կազմվում, այսինքն՝ եթե առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է, ուրեմն՝ բարդությունը համարվում է բուն հայկական:

Բարդության առաջին բաղադրիչ-գոյականը ստանում է զանազան հոլովների, կապերի արտահայտած իմաստներ, որոնք երևում են փոխակերպման ժամանակ /10, էջ249 /:

-ուղղականի նշանակությամբ /հուսահատ-հույսը հատած, սրտամեռ-սիրտը

մեռած /,

-սեռականի նշանակությամբ / ջրատար-ջրի տարած, արքայորդի-արքայի

որդի/,

-տրականի նշանակությամբ/ գրավարժ-գրին վարժված, չափահաս-չափին հասած և այլն: -հայցականի նշանակությամբ /մարդասեր- մարդ սիրող, ձկնորս-ձուկ որսացող /,

-բացառականի նշանակությամբ /հողածին- հողից ընկած, պաշտոնանկպաշտոնից ընկած /,

-գործիականի նշանակությամբ/ ձյունապատ-ձյունով պատված, ձեռագործձեռքով գործված /,

-ներգոյականի նշանակությամբ /խավարաբնակ-խավարում բնակվող, մոխրաթավալ-մոխրում թավալված /:

Անդրադառնալով իսկական բարդությունների ձևաբանական կաղապարներին՝ նշենք, որ.

1. Երկու գոյական արմատներով կարող են կազմվել գոյականներ և ածականներ:

Օրինակ՝ լող/գոյական/+ափ/գոյական/=լողափ/գոյական/, արծաթ/գոյական/+փայլ/գոյական=արծաթափայլ/ածական/:

2. Գոյական և ածական արմատներով կազմվում են ածականներ, ընդ որում՝ առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է:

Օրինակ՝մարդաշատ, սանձարձակ և այլն:

3. Գոյական արմատով և բայարմատով կազմվում են գոյականներ և ածականներ:

Օրինակ՝անտառ/գոյական/+պահող/բայարմատ/=անտառապահ/գոյական

ընկեր/գոյական/+սիրող/բայարմատ=ընկերասեր/ածական/

4. Ածական և գոյական արմատներով կազմվում են գոյականներ և ածականներ:

Օրինակ՝թուխ/ածական/+դեմք/գոյական/= թխադեմ /ածական/:

5. Երկու ածական արմատներով կազմվում են ածականներ:

Օրինակ՝բարի/ածական/+կիրթ/ածական/=բարեկիրթ/ածական/

6. Ածականով և բայարմատով կազմվում են ածականներ:

Օրինակ՝բարի/ածական/+գութ/բայարմատ/=բարեգութ/ածական/:

7. Բայահիմքից կամ բայից և գոյականներից կարող են կազմվել գոյականներ և ածականներ:

Օրինակ՝ գրել /բայ/ + գիր /գոյական/ = գրագիր /գոյական/,

8. Թվականներից և գոյականներից կազմվում են ածականներ:

Օրինակ՝ եռ/թվական/+անդամ/գոյական/=եռանդամ/գոյական/:

9. Դերանուներից և գոյականներից կազմվում են ածականներ և գոյականներ:

Օրինակ՝ ես /դերանուն/ + կենտրոն/գոյական/ = եսակենտրոն /գոյական/,

10. Դերանուններով և բայահիմքով կազմվում են ածականներ և գոյականներ:

Օրինակ՝ ինքն/դերանուն/+թիռ/բայահիմք/=ինքնաթիռ/գոյական/:

11. Դերանունով և ածականով կազմվում են ածականներ:

Օրինակ՝ յուր/դերանուն/+նման/ածական/=յուրանման/ածական/:

12. Մակբայներով և բայահիմքով կազմվում են ածականներ և գոյականներ:

Օրինակ՝հեռ/մակբայ/+խոս/բայահիմք/հեռախոս/գոյական/,

13. Մակբայով և ածականով կազմվում են ածականներ:

Օրինակ՝ միշտ/մակբայ/+դալար/բայահինք/մշտադալար/ածական/:

Երեք և ավելի բաղադրիչներով կազմվող բարդություններ

Խոսելով բարդությունների մասին՝ նշենք, որ ժամանակակից հայերենում կան բարդություններ, որոնք կազմվում են երկուսից ավելի բաղադրիչներով: Դրանք շատ չեն և երկարության պատճառով այդքան էլ գործածական չեն/10, էջ253/: Նման բարդությունները կազմվում են երկու բաղադրիչներ ունեցող բառերի հիման վրա և հիմնականում նորակազմություններ են: Այդպիսի բարդությունները հիմնականում վերաբերում են մասնագիտական- տերմինաբանական բառապաշարին: Հարաբարդ կամ բազմաբարդ բարդությունները կարող են լինել եռաբաղադրիչ /օդանավակայան, հեռախոսավար/քառաբաղադրիչ/կինոլուսանկարահանում, հեռագրայունաշարք/ և այլն:

Հապավումներ

Հապավումը բառակազմության տեսակ է, որը բաղադրյալ բառերի կամ անվանումների կրճատված մասերի միացումով բարդություն կազմելու եղանակ է/10, էջ 292/: Ինչպես Գ. Սևակն է նշել՝ հապավումը բառակազմության այն եղանակն է, երբ բաւդ բառերի բաղադրիչները ոչ թե բառ կամ արմատ են, այլ բառից մեխանիկորեն վերցրած որևէ պայմանական մաս, որը որևէ գործածություն չունի և չի էլ ունեցել/11, էջ 173/: Այսինքն՝ դրանք դիտվում են ոչ թե բառարմատներ, այլ պայմանական, կրճատ փոխարինիչներ: Հապավական բարդության բաղադրիչները կոչվում են հապավույթներ/10, էջ293/: Հապավումներն առաջացել են համառոտագրության հիման վրա: Սկզբում գրվել են կետերով, իսկ հետագայում այդ կետերը վերացել են:

Հապավումները լինում են չորս տեսակ՝ տառային, վանկային/բառամասային/, վանկատառային և վանկաբառային:

Տառային հապավումները կազմվում են տառային հապավույթներով, այսինքն՝ բառերի առաջին տառերով/ՄԱԿ-Միավորված Ազգերի

Կազմակերպություն, բուհ- բարձրագույն ուսումնական հաստատություն/:

Վանկային հապավումները կազմվում են վանկային հապավույթներով/կենտկոմ-կենտրոնական կոմիտե, կոմկուս-կոմորնիստական կոսակցություն/:

3. Վանկատառային հապավումները կազմվում են վանկային և տառային հապավույթներից/ՀամԼԿԵՄ-Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդական միություն/:

4. Վանկաբառային հապավումները կազմվում են վանկային հապավույթներով և բառերով/խնայդրամարկղ-խնայող դրամարկղ/:

Որպես հապավման տեսակ կարող են հանդես գալ օտարալեզու հապավումների փոխառությունները/ ՅՈՒՆԵՍԿՕ, զագս/:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

### 1) ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Խոսելով տարրական դպրոցում բառակազմական գիտելիքների ուսումնասիրման մասին՝ նշենք, որ այն անհրաժեշտ է և համարվում է անծանոթ բառերի իմաստը բացատրելու եղանակներից մեկը, ինչպես նաև նպաստում է ուղղագրական գիտելիքների ձեռքբերմանը և ամրապնդմանը, բառապաշարի հարստացմանը, շրջապատող իրականության և աշխարհի մասին գիտելիքների ձեռքբերմանն ու ընդլայնմանը:

Բառակազմության ուսումնասիրությունը, իբրև քերականական գիտելիք, ուսումնասիրվում է երկրորդ դասարանից սկսած: Սակայն արդեն առաջին դասարանից սկսած՝ որոշակի անդրադարձ կատարվում է բառակազմությանը: Այստեղ, իհարկե, հիմնականում ներկայացված է նկարների ձևով, որն ավելի հետաքրքրական է դառնում երեխաների համար/ 7, էջ 45-46 /:

Բառակազմական գիտելիքների բառակազմական գիտելիքների ուսումնասիրումն առավել արդյունավետ և նպատակային է լինում, երբ, ինչպես նշում է Ջ. Գյուլամիրյանը, ուսումնասիրվում է քայլ առ քայլ կամ փուլերով/2, էջ 213 /:

Որպես առաջին փուլ կարող ենք նշել հետևյալը. Պետք է մեկ անգամ ևս հիշեցնել, թե ինչ է բառը: Հնչյունների այն միացությունը կամ հնչյունը, որն իմաստ է արտահայտում, կոչվում է բառ /12, էջ 345/:

Դրանից հետո արդեն կարող ենք աստիճանաբար անցում կատարել նույնարմատ բառերի ուսուցմանը՝ դա իրականացնելով վարժությունների միջոցով: Սա պայմանավորված է նրանով, որ երեխաների համար առավել հեշտ և հետաքրքրական է դառնում, երբ տեսականը բացատրվում է գործնականի հիման վրա:

Նույնարմատ բառերի ուսուցում իրականացնելիս ևս պետք է վարժություններն ընտրել պարզից դեպի բարդ սկզբունքով, քանի որ երեխաները սկզբում նույնարմատ են համարում այն բառերը, որոնք առարկայորեն նույնանում են: Օրինակ՝ բադբադիկ, մատ-մատիկ, տուն-անտուն , շգույն- անգույն և այլն: Միևնույն ժամանակ այս փուլում երեխաները նույնարմատ չեն համարում այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ծաղիկ- ծաղկման, ձյուն- ձյունածածկ և այլն / 2, էջ 214/:

<<Արմատ>> հասկացությունը բացատրելու համար պետք է թվարկել բառերի որոշակի շարք, որտեղ կա միևնույն կրկնվող բառ, և երեխաներին ներկայացնել, որ դա արմատն է/ 2, էջ 214, 12, 347:

Օրինակ՝

| | |
|---|---|
| Հայ<br>Հայաստան<br>հայերեն<br>հայուհի<br>հայաշատ<br>հայասեր | վարդ<br>վարդակ<br>Վարդուհի<br>վարդենի<br>վարդագույն<br>վարդակակաչ |

Այս ամենի հիման վրա տալիս ենք արմատի և նույնարմատ բառերի սահմանումը:

Բառի այն մասը, որն անփոփոխ կերպով կրկնվում է մի շարք բառերի մեջ և արտահայտում է բառի հիմնական իմաստը, կոչվում է արմատ:

Միևնույն արմատից կազմված բառերը կոչվում են նույնարմատ բառեր:

Սրան զուգահեռ՝ պետք է բացատրել նաև, որ բառաշարքի կրկնվող մասը, որը բառի արմատն է, արտահայտում է բառի հիմնական իմաստը և կոչվում է իմաստակիր մաս:

Երբ երեխաներն արդեն հասկանում են, թե ինչ է արմատը, դրանից հետո պետք է ներկայացնել՝ ինչ է ածանցը: Դրանից հետո կարող ենք գրատախտակին գրել ածանցավոր բառեր և հանձնարարել ընդգծել արմատը, ապա ներկայացնել, որ չընդգծված մասնիկներն ածանցներ են:

Ինչպես նշում է Ջ. Գյուլամիրյանը, այն մասնիկը, որն ավելանում է բառի սկզբում կամ վերջում, փոխում է նրա ձևը, նրան նոր իմաստ է տալիս, կոչվում է ածանց, իսկ այն բառերը, որոնք ունեն ածանց, կոչվում են ածանցավոր բառեր / 2, էջ

214/:

Օրինակ՝

Անգույն, դժգոհ, գոհություն, անբան, բանուկ, անտուն փոքրիկ, նավակ և այլն:

Երբ երեխաները սկսում են հասկանալ, թե որն է ածանցավոր բառը, պետք է նրանց անմիջապես բերել այն եզրակացության, որ կան ածանցներ, որոնք ավելանում են բառի սկզբից, կան ածանցներ, որոնք ավելանում են բառի վերջից: Գրատախտակին գծում ենք աղյուսակ մի՝ կողմում գրելով նախածանցավոր բառեր, մյուս կողմում՝ վերջածանցավոր բառեր:

| ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ | ՎԵՐՋԱԾԱՆՑԱՎՈՐ |
|---|---|
| անտուն<br>դժգույն<br>անսիրտ<br>տգետ | տնակ<br>գունավոր անգույն<br>գիտուն |

Օրինակի վրա կարող ենք տալ համապատասխան սահմանումները.

Այն ածանցները, որոնք ավելանում են բառի սկզբից, կոչվում են նախածանցներ: Այն ածանցները, որոնք ավելանում են բառի վերջից, կոչվում են վերջածանցներ:

Ածանցի և արմատի մասին գիտելիքները ավելի ամրապնդելու համար կարող ենք հանձնարարել առաջադրանքներ, որոնք պահանջում են տրված բառերից առանձնացնել ածանցավոր բառերը, կամ լրացնել աղյուսակը՝ մի շարքում գրել ածանցավոր բառերը, մյուս շարքում գրել արմատները /տես հավելված, առաջադրանք 1/:

Ածանցավոր բառերի մասին գիտելիքներ ձեռք բերելուց հետո պետք է սկսել արդեն պարզ և ածանցավոր բառերի տարբերությունների ուսումնասիրումը: Նախ պետք է ներկայացնել, թե որն է պարզ բառը: Դրա համար բառից դարձյալ առանձնացնում ենք արմատը: Սա նույնպես դյուրըմբռնելի է դառնում, երբ ներկայացնում ենք գործնական վարժությունների միջոցով: Գրատախտակին կարող ենք աղյուսակ գծել, որտեղ մի կողմում գրում ենք միայն արմատ պարունակող բառեր, իսկ մյուս կողմում՝ածանցավոր բառեր: Ապա բացատրում ենք, որ այն բառերը, որոնք կազմված են մեկ արմատից, կոչվում են պարզ բառեր:[1] Օրինակ՝

| Պարզ | ածանցավոր |
|---|---|
| աշակերտ | աշակերտական |
| դաս | դասարան |
| տուն | տնակ |
| ընկեր | ընկերուհի |

Ներկայացվածն ավելի լավ ընկալելու և ամրապնդելու համար կարող ենք հանձնարարել առաջադրանքներ: Օրինակ՝ տրված բառերն առանձնացնել՝ մի կողմում գրելով պարզ բառեր, իսկ մյուս կողմում՝ ածանցավոր բառեր: Կամ՝ տրված բառերի դիմաց գրել դրանց ածանցավոր տարբերակը: Կարող ենք նաև հակառակ հանձնարարությունը տալ. առանձնացնել տրված բառերի արմատները/տես հավելված, առաջադրանք 2, 3, 4/:

Երբ երեխաները հասկանում են, թե ինչ ենք հասկանում պարզ բառեր ասելով, որոշակի գիտելիքներ են ձեռք բերում պարզ բառերի վերաբերյալ, սկսվում է բառերի ուսումնասիրության հաջորդ փուլը ՝ բարդ բառերի մասին տարրական գիտելիքների ուսուցումը: Դրա համար կարող ենք գրատախտակին գրել բառերի երկու շարք, և դրանք համադրելով՝ ստանալ նոր բառեր /2, էջ 215/: Օրինակ՝

Գիր +տախտակ= գրատախտակ

Դաս + սենյակ =դասասենյակ

Ծաղիկ + ման = ծաղկման

Երեխաներին նույնպես կարող ենք նմանատիպ հանձնարարություններ տալ/ տե՛ս հավելված, առաջադրանք 5/: Առաջադրանքն ավելի հետաքրքիր դարձնելու համար նույնը կարող ենք հանձնարարել նաև նկարների միջոցով. աշակերտներին կարող ենք բաժանել քարտեր, որոնց վրա նրանք պետք է աշխատեն: Աշակերտները պետք է երկու համապատասխան նկարներ իրար միացնելով կազմեն նոր բառեր/ տես հավելված, առաջադրանք 6/:

Նմանատիպ վարժությունների միջոցով կարող ենք ցույց տալ, որ ստացված բառերը կազմված են երկու պարզ արմատների համադրումից: Ելնելով սրանից արդեն տալիս ենք նաև բարդ բառերի սահմանումը: Այն բառերը, որոնք պարունակում են երկու կամ ավելի արմատներ կոչվում են բարդ բառեր: Խթանման փուլում պետք է հանձնարարել տարբեր տեսակի առաջադրանքներ; որպեսզի ամրապնդվի բարդ բառերի վերաբերյալ ստացված գիտելիքները: Կարող ենք հանձնարարել տրված բարդ բառերը ներկայացնել պարզ արմատների տեսքով:

Օրինակ՝/տես հավելված, առաջադրանք 7/

Վարդակակաչ

վարդ +կակաչ

Երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնելու համար կարելի դասերի ժամանակ կիրառել տարբեր դիդակտիկ նյութեր՝ նկարներ, կոնկրետ առարկաներ և այլն/ տե՛ս հավելված, նկար 1/:

Բարդ բառերի մասին որոշակի գիտելիքներ ձեռք բերելուց հետո պետք է գաղափար տալ <<ա>> հոդակապի մասին: Դրա համար գրատախտակին գրում ենք երկու բառաշարք: Մի շարքում գրում ենք անհոդակապ բարդ բառեր, մյուս շարքում՝ հոդակապով բարդ բառեր և ցույց ենք տալիս, որ կան բարդ բառեր, որոնց արմատները իրար միանում են <<ա>> տառով, կան բառեր էլ, որոնց արմատները միանում են առանց <<ա» հոդակապի:

| Անհոդակապ: | Հոդակապով |
|---|---|
| Քարսիրտ | դասամատյան |
| երեսսրբիչ | ծաղկավաճառ |

Բացատրելու համար երկրորդ բառաշարքի բառերի ա հոդակապը, կարող ենք վերցնել շրջանակի մեջ և ցույց տալ, որ այս շարքում, բացի արմատներից, կա նաև մեկ այլ մասնիկ, որն ընկած է արմատների միջև: Ելնելով սրանից՝ կարող ենք ասել, որ արմատների միջև ընկած «ա» հնչյունը կոչվում է հոդակապ:

Բարդ բառերի ուսումնասիրության ժամանակ վերլուծական-համադրական մեթոդով կարող ենք ցույց տալ, որ բարդ բառերը բացի արմատներից կարող են կազմված լինել ածանցներից, և եթե բառը կազմված է լինում երկու և ավելի արմատներից ու ածանցից կոչվում է բարդածանցավոր բառ /2, էջ 215/: Օրինակ՝

պարզերեսություն գրասեղանային անկարգապահ

բարեկամություն

2) ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Բառակազմության ուսումնասիրումն իբրև քերականական գիտելիք, ինչպես արդեն նշվեց, ուսումնասիրվում է երկրորդ դասարանից սկսած: Սակայն առաջին դասարանից սկսած արդեն որոշակի անդրադարձ կատարվում է բառակազմությանը: «Աա»հնչյուն-տառի ուսուցման ժամանակ երեխաները տեսնում են, թե ինչպես են երկու նկարներ, որոնք հանդես են գալիս որպես բառեր, միանում և կազմում են նոր բառ /7, էջ 45-46

/:Երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնելու համար կարող ենք պաստառների վրա փակցնել կամ նկարել սեփական տարբերակը, ինչպես նաև հանձնարարել նման առաջադրանք կատարել նաև տանը: Այբբենարանում կան նաև նմանատիպ այլ առաջադրանքներ, որոնք ևս հետաքրքրություն են առաջացնում երեխաների մոտ:

Օրինակ՝նկարված է մոմ և գրված է կալ և արդյունքում մոմակալ է նկարված:

Կամ՝ նկարված է երկու սար, իսկ նրանց մեջտեղում գրված՝<<ե>>հնչյունը: Ճիշտ է, երեխաները չեն հասկանում, որ դա բարդություն է, սակայն տեսնում են, որ երկու սար բառերը միացել են, և արդյունքում ստացվել է սարեսար բառը, կամ երկու պատ բառերն են միացել և ստացվել է պատեպատ բառը: «Ժ»հնչյուն- տառի ուսուցման ժամանակ ցույց է տրված,

թե ինչպես է ժիր և այր բառերի միավորումից ստացվել Ժիրայր անունը կամ ժամ և ցույց բառեր ի միավորումից ստացվել ժամացույց բարդ բառը:

ժիր+այր= Ժիրայր ժամ+ցույց= ժամացույց

Թեև նույնարմատությունը սկսում են ուսումնասիրել երկրորդ դասարանում, սակայն առաջին դասարանի «Մայրենի 1» դասագրքում նմանատիպ առաջադրանք երեխաներին հանձնարարվում է / 8, էջ 39/: Առաջադրանքում ցույց է տրված, թե ինչպես է հայ արմատը միանում աստան, երեն, ուհի, աշատ, ասեր բառերին և կազմվում է Հայաստան, հայերեն, հայուհի, հայաշատ, հայասեր բառերը:

Արդեն երկրորդ դասարանի մայրենիի առարկայական ծրագրով նախատեսված է սովորեցնել բառի կազմությունը, այսինքն՝գործնականում կարողանալ տարբերակել բառի բաղադրիչները, բառի տեսակներն ըստ կազմության, ասինքն՝տարբերակել պարզ, ածանցավոր, բարդ բառերը/ 14, էջ22/: Երկրորդ դասարանում լեզվական այս նյութի ուսուցման նպատակն ՝ ձևավորել բառի բաղադրիչները ճանաչելու և անսխալ գրելու կարողություններ, ինչպես նաև կարողանալ օգտագործել բառակազմական գիտելիքները բառիմաստն ընկալելու և բառապաշարը հարստացնելու նպատակով: Ծրագրով նաև նախատեսված է մեթոդներ, որոնցով կարելի է աշխատել՝ տեքստային վերլուծական աշխատանքներ, բառակազմական խաղեր, բառակազմական պատկերների, քարտերի ստեղծում, խաչբառերի լրացում:

Երբ ուսումնասիրում ենք «Մայրենի 2» դասագիրքը, տեսնում ենք, որ այստեղ փուլ առ փուլ ուսումնասիրվում է, թե ինչ է արմատը, ածանցը, պարզ, ածանցավոր և բարդ բառերը: Ամենասկզբում ուսուցանվում է «արմատ» հասկացությունը: Դասագրքում նկարված ծառը կարելի է ավելի մեծ պաստառի վրա նկարել և ցույց տալ, որ բառերը ևս ծառի նման արմատ ունեն, իսկ ճյուղերը ներկայացնել որպես այդ արմատից կազմված բառեր /13, էջ 105/:

Երեխաների ուշադրությունը գրավելու, նրանց մոտ հետաքրքրություն առաջացնելու համար կարելի է նաև պաստառի վրա ծաղիկ պատկերել և մեջտեղում գրել արմատը, իսկ թերթիկների վրա՝ այդ արմատից կազմված բառերը/տես հավելված, նկար 2/: Սա պետք է ներկայացնել խթանման փուլում: Այստեղ կարող ենք նաև գրել նաև բառաշարքեր, որոնք կազմված են միևնույն արմատից.

| | | |
|---|---|---|
| գունատ | ջրային | ձյունոտ |
| գունավոր | անջուր | ա |

նձյուն

ձյ

դժգույն ջրիկ ունե

ձյ

անգույն ջրալի ունիկ

Գրելով այս բառաշարքերը՝ ցույց ենք տալիս, որ դրանք կազմված են նույն արմատից և կարող ենք սահմանել, որ արմատը բառի հիմնական իմաստ արտահայտող մասն է, որի հիման վրա կառուցվում են այլ բառեր:

Իմաստավորման փուլում արդեն կարելի է երեխաներին տալ նախօրոք պատրաստված քարտեր, որոնց վրա պետք է աշխատեն: Քարտերի վրա կարող է լինել ծառ, որի ճյուղերի վրա գրված բառերից երեխաները պետք է գտնեն արմատը/տե՛ս հավելված, առաջադրանք 8/:

Երբ աշակերտներն արդեն ընկալում են, թե ինչ է արմատը, բացատրում ենք, որ արմատը պարզ բառ է, քանի որ կազմված է միայն արմատից: Այսինքն՝ միայն արմատից կազմված բառերը կոչվում են պարզ բառեր: Որպես տնային աշխատանք կարելի է հանձնարարել նմանատիպ առաջադրանք: Տրված բառերը գրել առանձին շարքերով ըստ արմատների.

Անտուն, ծաղկանոց, ձյունոտ, ծաղկավաճառ, տնային, տնակ, ձնաբուք, ծաղկափոշի, տնական, ձնեմարդ, ծաղկեփունջ, տանտիրուհի, ծաղկաբույր, ձնախառն:

Ածանցի ուսուցումն իրականացվում է արմատի մասին ունեցած գիտելիքների հիման վրա: Դա կարող ենք անել հետևյալ կերպ. գրատախտակին գրում ենք ածանցավոր բառեր և երեխաների օգնությամբ գտնում ենք արմատներըը՝ ընդգծելով դրանք:

<u>Ճնի</u>կ

ան<u>տուն</u> դժ<u>գոհ</u> <u>թագ</u>ավոր

Երբ արմատներն ընդգծում ենք, երեխաները տեսնում են, որ արմատից բացի բառերը պարունակում են նաև այլ մասնիկներ, և բացատրում ենք, որ բառի չընդգծված մասնիկները կոչվում են ածանցներ, իսկ այն բառերը, որոնք պարունակում են ածանցներ, կոչվում են ածանցավոր բառեր: Ավելի լավ հասկանալու համար կարելի է հանձնարարել հետևյալ առաջադրանքը. Տրված բառերը գրել առանձին սյունակներով՝ մի կողմում գրելով պարզ բառերը, մյուս կողմում՝ ածանցավոր բառերը/տես հավելված, առաջադրանք 2/: Կարող ենք հանձնարարել նաև հետևյալ առաջադրանքը. Տրված բառերում առանձնացնել արմատը և ածանցը/ տես հավելված, առաջադրանք 3/:

Երկրորդ դասարանում անցկացրած դասի ժամանակ պատրաստել էի քարտեր, որոնց վրա գրված էր ածանցների շարք և մեկ արմատ: Դասարանը բաժանվել էր երկու հոգանոց խմբերի: Հանձնարարված էր կազմել ածանցավոր բառեր՝ արմատը միացնելով համապատասխան ածանցներին: Աշխատանքի համար տրվեց 6 րոպե ժամանակ: Առաջադրանքի նպատակն էր պարզել, թե որքանով է արդյունավետ նման առաջադրանքը կատարել խմբերով և որքանով կնպաստի բառակազմական գիտելիքների ձեռքբերմանը: Արդյունքում՝ երեխաներն ավելի հեշտությամբ կարողացան կատարել այդ առաջադրանքը, և ըստ երևույթին բավարար արդյունք տվեց: Երեխաները հասկացան, որ միևնույն արմատին ածանցներ ավելացնելիս կազմվում են նոր բառեր, որոնք ունեն տարբեր իմաստներ: Բարդ բառերի ուսուցումը ևս իրականացվորմ է արմատի մասին ունեցած գիտելիքների հիման վրա: Բարդ բառերի ուսուցումն ավելի հետաքրքիր և տպավորիչ դարձնելու համար կարելի է պատրաստել պաստառներ, որոնց վրա բառերի փոխարեն կլինեն նկարներ: Ստացված բառերը ևս կներկայացնենք նկարների տեսքով:

Երրորդ դասարանում ծրագրով նախատեսված է երկրորդ դասարանում ձեռք բերած բառակազմական գիտելիքների կրկնություն և խորացում: Աշակերտները գործնականում պետք է կարողանան տարբերակել բառի բաղադրիչները: Ուսուցման նպատակն է ընդլայնել ճանաչողական գիտելիքները և հարստացնել բառապաշարը բառերի բացատրության ճանապարհով, ինչպես նաև ընդլայնել լեզվի բառապաշարի հանդեպ հետաքրքրությունների շրջանակը /14, էջ 28 /:

Ծրագրով նախատեսված են նաև գործունեության տեսակները. վարժություններ բառերի ճիշտ գործածության շուրջ, տրված բառաշարքում առանձնացնել բառի բաղադրիչները, բառերը տեղադրել տեքստի մտքին համապատասխան, ավարտել տրված պատմությունը՝օգտագործելով տրված բարդ և ածանցավոր բառերը, տրված բառակապակցություններն արտահայտել մեկ բառով, օգտվելով տրված ածանցներից՝բառակապակցության դիմաց գրել ածանցավոր բառը, կարդալ տեքստը՝լրացնելով անհրաժեշտ ածանցները /14, էջ 28/:

Երրորդ դասարանի դասագրքում ուսուցանվող գրեթե բոլոր նյութերից հետո կան բառակազմությանը վերաբերող առաջադրանքներ: Օրինակ՝ «իկ»ածանցով կազմել բառեր, տրված արմատով կազմել ածանցավոր և բարդ բառեր, լրացնել աղյուսակը՝կազմելով ածանցավոր և բարդ բառեր՝ գույն արմատը կիրառելով բառասկզբում և բառավերջում.

| գույն- | -գույն |
|---|---|
| | |

Կան նաև այնպիսի առաջադրանքներ, որոնք պահանջում են տեքստից դուրս գրել «իկ» և «ություն» ածանցով բառերը՝ լրացնելով աղյուսակը:

| -իկ- | -ություն- |
|---|---|
| | |

Կան առաջադրանքներ, որտեղ պահանջվում է ընդգծել տրված բառերի արմատները կամ տրված բառերից առանձնացնել վերջածանցները և կազմել նոր բառեր և այլն: Իհարկե կարող ենք կազմել առաջադրանքների սեփական տարբերակը: Երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնելու համար կարող ենք պատրաստել քարտեր, որոնք նախատեսված են ինչպես անհատական, այպես էլ խմբային աշխատանքների համար/տոս հավելված, առաջադրանք 9, 10/:

Խոսելով չորրորդ դասարանում բառակազմական գիտելիքների ձեռքբերման մասին՝ասենք, որ ուսուցանվող նյութը երկրորդ և երրորդ դասարաններում ձեռք բերած գիտելիքների կրկնությունն է, որի նպատակն է ամրակայել և խորացնել բառակազմության վերաբերյալ անցած գիտելիքները / 14, էջ 36/:

Չորրորդ դասարանի դասագրքում հենց սկզբից անդրադարձ է կատարվում բառակազմությանը: Լեզվաբանի դաս հատվածում ներկայացված է, թե քանի տեսակ են լինում բառերն ըստ կազմության/ 4, էջ 9/: Նույն բանը կարող ենք ներկաբացնել աղյուսակով.

| | տեսակը | սահմանումը | օրինակները |
|---|---|---|---|
| | պարզ | Մեկ արմատից կազմված բառերը կոչվում են պարզ բառեր: | Տուն, բակ, դաշտ, մարդ, ծաղիկ, մանուկ, շուն, սեղան, բժիշկ, ծառ, ձյուն, ուրախ |
| | ածանցավոր | Մեկ արմատից և ածանցներից կազմված բառերը կոչվում են ածանցավոր բառեր: | Անտուն, ծաղկունք, շնիկ, բժշկություն, ձյունե, դաշտային, բարձրություն, անօգուտ |
| | բարդ | Երկու և ավելի արմատներից կազմված բառերը կոչվում են բարդ բառեր: | Գրասեղան, դասասենյակ, ծաղկաման, բարեգործ, սահմանապահ, գրախանութ |

| | | | |
|---|---|---|---|
| | Բարդ ածանցավոր | Երկու կամ ավելի արմատներից և ածանցներից կազմված բառերը կոչվում են բարդածանցավոր բառեր: | Հանցագործություն, հաղորդավարուհի, ազգակցական, մայրաքաղաքային, բառակազմություն, անկազմակերպ, մարդամոտություն |

Ինչ վերաբերում է առաջադրանքների շարքին, ապա կարող ենք ասել, որ դրանք իրենց բնույթով նման են երրորդ դասարանի առաջադրանքներին: Օրինակ՝ առանձնացնել արմատը և կազմել ածանցավոր կամ բարդ բառեր, ընդգծել ածանցը և դրանով կազմել նոր բառեր, առանձնացնել տրված բառերի արմատները և ածանցները, տեքստից դուրս գրել ածանցավոր կամ բարդ բառերը և այլն:

Իհարկե, ակնհայտ է դառնում, որ բառակազմական գիտելիքների ձեռքբերման հիմքը դրվում է երկրորդ դասարանում, սակայն եթե դրանք չխորացվեն և չամրակայվեն երրորդ և չորրորդ դասարաններում, երեխաների համար գիտելիք չեն դառնա:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԱՌԱՐԿԱ՝ Մայրենի

ԴԱՍԱՐԱՆ՝ 3-րդ

ԹԵՄԱՆ՝ «Ծիրանենին»

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝ Սահուն և արտահայտիչ ընթերցելու կարողությունների ձևավորում, բառակազմական գիտելիքների խորացում և ամրակայում բառի նկատմամբ հետաքրքրության ձևավորում:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ՝

**Խթանման փուլ՝**

**Բառ–բանալի մեթոդի օգնությամբ ընկալել տեքստի հիմնական գաղափարը:Հասկանալ**
**արև, ոսկեփայլ, հարսնազգեստ, սրտատրոփ, ճյուղ, սևանալ բառերի բառակազմական և ուղղագրական առանձնահատկությունները:**

**Իմաստի ընկալման փուլ՝**

**Գրել հոմանիշը՝**

**ճերմակ–**

**արև–**

**պտուղ–**

**Գրել հականիշը՝**

**չար–**

**սև–**

**կանգ առնել–**

**Բառակազմական գիտելիքները ամրակայելու և խորացնելու համար նախօրոք փակցնել պաստառ, որի վրա նկարված է ծառ, այնուհետև՝ գծապատկեր, որի վրա ներկայացված է բառերի տեսակներն ըստ կազմության: Այնուհետև հանձնարարում ենք առաջադրանք երկու տարբերակով. կազմել 5 ածանցավոր և 5 բարդ բառ «արև» և «գույն» արմատներով: Այս աշխատանքի համար պատրաստել քարտեր:**

**Կազմել 5 ածանցավոր և 5 բարդ բառ «արև»արմատով**

| Ածանցավոր | Բարդ |
|---|---|

| | |
|---|---|
| | |

| Կազմել 5 ածանցավոր և 5 բարդ բառ «գույն»արմատով | |
|---|---|
| Ածանցավոր | Բարդ |
| | |

3. Կշռադատման փուլ՝

Կատարել դասի ամփոփում քառաբաժան մեթոդով.

| Ի՞նչ տեսա: | Ի՞նչ լսեցի: |
|---|---|

| Ի՞նչ զգացի: | Ի՞նչ սովորեցի և իմացա: |
| --- | --- |

Տնային առաջադրանք

Կազմե՛լ բարդ և ածանցավոր բառեր «սեր» արմատով:

Դասի թեման էր, «Ծիրանենին»: Դասի նպատակն էր սահուն և արտահայտիչ ընթերցելու կարողությունների և հիմնական գաղափարը ընկալելու կարողությունների ձևավորում և բառակազմական գիտելիքների ամրակայում և խորացում, բառի նկատմամբ հետաքրքրության ձևավորում: Դասն սկսեցինք նյութի ընթերցանությամբ: Ընթերցելուց հետո կատարեցինք բառային աշխատանք: Երեխաների հետ միասին քննարկեցինք արև, ոսկեփայլ, հարսնազգեստ, սրտատրոփ , ճյուղ, սևանալ բառեը՝ անդրադառնալով դրանց բառակազմական և քերականական առանձնահատկություններին:

Ներկայացրինք, որ հարսնազգեստ բառը բարդ բառ է, որը կազմված է հարս և զգեստ բառահիմքից և ա հողակապից /հարսն+ա+զգեստ/, սևանալ բառը ածանցավոր բառ է, որը կազմված է սև բառահիմքից և անալ ածանցից /սև+անալ/: Խոսեցինք նաև այդ բառերի ուղղագրության մասին. արև/և–եվ/, սևանալ/և–եվ/, ոսկեփայլ/ո–վո/:

Իմաստի ընկալման փուլում քննարկեցինք ճերմակ, արև, պտուղ բառերը՝ գրելով հոմանիշները. ճերմակ–սպիտակ, արև–արեգ, արփի, պտուղ–միրգ:

Դրանից հետո անդրադարձանք չար, սև, կանգ առնել բառերի հականիշներին.

չար– բարի,

սև–սպիտակ,

կանգ առնել–շարունակել

Բառակազմական գիտելիքները ամրակայելու համար իմաստի ընկալման փուլում վերհիշեցինք, թե ինչ ենք հասկանում բառի կազմություն ասելով, և ըստ կազմության քանի տեսակ են լինում բառերը: Նախօրոք փակցրել էինք պաստառ, որի վրա ներկայացված էր բառերի տեսակներին վերաբերող գծագիր/ տե՛ս հավելված, գծագիր 1 /: Գծագրում ներկայացված էր պարզ, ածանցավոր և բարդ բառերի տեսակները, դրանց սահմանումները և օրինակները: Բացի այդ ներկայացրել էինք նաև պաստառ: Պաստառի վրա պատկերված էր ծառ, որի արմատը նույնացված էր բառերի արմատների հետ, իսկ ճյուղերը՝ այդ արմատներից կազմված բառերի հետ: Այնուհետև, գրատախտակին գրեցինք մի քանի առաջադրանքներ, որոնց օգնությամբ վերհիշեցինք, թե որոնք են պարզ բարդ և ածանցավոր բառերը: Դրա համար գրատախտակին գրեցինք հետևյալ առաջադրանքները՝

| պարզ | ածանցավոր |
|---|---|
| գույն, լույս , դաս | դժգույն , լուսավոր, դասարան |

| պարզ | ածանցավոր | բարդ |
|---|---|---|
| տուն, բույն , քույր | տնական , անբույն, քույրիկ | տանտիրուհի բնավեր հորաքույր |

## Բարդբառեր

ՀՈԴԱԿԱՊՈՎ ԱՆՀՈԴԱ ԿԱՊ

դասասենյակ ջրկիր

**վարդակակաչ** **հացթո**
**ւխ**

**վարդագույն** **բացթո**
**ղում**

**Այս օրինակներից հետո երեխաները կրկին վերհիշեցին, որ պարզ բառերը միայն մեկ արմատ ունեցող բառերն են, ածանցանցավոր բառերը կազմված են արմատից և ածանցից, իսկ բարդ բառերը երկու և ավելի արմատներից կազմված բառերն են:**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բաղադրյալ բառերի ուսումնասիրման միջոցով բառի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու նպատակով մեր հետազոտության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

Բառակազմությունն ուսումնասիրում է բառի կազմության առանձնահատկությունները՝ բառի կառուցվածքը, այն կազմող բաղադրիչների փոխհարաբերությունները, որի ուսուցումը կրտսեր դպրոցում անհրաժեշտ է և կարևոր է հատկապես անծանոթ բառերի իմաստը բացատրելու համար, որի համար էլ կարևորվում է պարզ, ածանցավոր և բարդ բառերի տեսակները իմանալու անհրաժեշտություն կրտսեր դպրոցականների կողմից:

Բառակազմության ուսուցումը կրտսեր դպրոցում կարևորվում է նաև բառապաշարի հարստացման, ուղղագրական գիտելիքների խորացման և ամրակայման առումով: Այսինքն՝ երեխան, սովորելով պարզ, ածանցավոր և բարդ բառերի տեսակները, միևնույն ժամանակ սովորում է նաև այն, որ տվյալ արմատի ուղղագրական առանձնահատկությունը չի փոխվում պարզ, ածանցավոր, բարդ բառերի կազմության մեջ:

Անցկացրած փորձի արդյունքում ակնհայտ երևաց, որ աշակերտները բարդ բառեր ավելի հեշտությամբ կարողացան կազմել, իսկ ածանցավոր բառեր կազմելիս ունեցան որոշակի դժվարություններ: Առաջացած դժվարությունները հաղթահարելու համար նույն առաջադրանքները կատարելով միասին՝ակնհայտ եղավ, որ երեխաների մոտ առաջացավ հետաքրքրություն, որը դրսևորվեց նրանց կողմից համատեղ և աշխույժ քննարկումով՝ անդրադառնալով իրենց սխալ և ճիշտ պատասխաններին:

Բառի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար արդյունավետ միջոց հանդիսացավ նաև միևնույն հնչյունական կազմ ունեցող արմատների և ածանցների քննարկումը, այսինքն՝ աշակերտները տեսան, որ միևնույն հնչյուններից կազմված ձևույթը կարող է լինել և՛ ածանց, և՛ արմատ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբեղյան Մ, Հայոց լեզվի տեսություն, Երևան, Հայկական ԳԱ հրատարակչություն, 1974, 847 էջ:

Գյուլամիրյան Ջ, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Զանգակ, Երևան, 2015, 316 էջ:

Գյուրջինյան Դ, Հեքեքյան Ն, Մայրենի 3, Թդիտ Պրինտ, Երևան 2011:

Գյուրջինյան Դ, Հեքեքյան Ն, Մայրենի 4, Էդիտ Պրինտ, Երևան 2011:

Եզեկյան Լ, Հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատարակպություն, 2007, 402 էջ:

Ջահուկյան Գ. Բ., Խլղաթյան Ֆ.Հ., Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, Զանգակ, 2007, 140 էջ:

Սարգսյան Վ Այբբենարան, Երևան 2016:

Սարգսյան Վ, Մայրենի 1, Երևան 2015:

Սարգսյան Վ. Մայրենի 2, Երևան 2015:

Սուքիասյան Ա, Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2004, 352 էջ:

Սևակ Գ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 350 էջ:

Տեր-Գրիգորյան Ա, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:

Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2, Էդիտ Պրինտ, Երևան, 2016:

Հայոց լեզու, գրականություն, հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագիր /1-9 դասարաններ/: